

պատճառաբանելով՝ թէ « մի է մատաղսմիս եւ խառնումիս առ ի հեշտութիւն եւ փափկութիւն մարմնոյ » (ՂԱ):

Քան զայլս կը գերազանցէ զատկական գառին աղաւաղութիւնը: Անոր զենումը կը համարուի « ի խորհուրդ անարատ Գառինն՝ որ ի վերայ մեղսաքաւիչ սեղանոյն պատարագի՝ » ըստ Ալաւկայ որդւոյն (ՂԱ), որուն կը ձայնակցին նաեւ Սիւնեաց պատմիչն Որբելեան (ՀԿՃ. Է) եւ Տաթեւացին (Հրց. 657). երեքն ալ նշանաւոր վարդապետներ իրենց ժամանակին, որոնք անտարակոյս հասարակաց կարծիքը կը ներկայացնեն. մանաւանդ իրենց դարերէն ալ հին կարծիք մը՝ զոր տեսանք Արշարունոյն վկայութեան մէջ, « գառն՝ որ բառնայ զմեղս աշխարհի » (աստ, 370-1). այս ինքն օրինակ բարձողին մեղաց: Ալաւկայ որդին խիզախաբար աւելի յառաջ կ'երթայ, եւ կը դաւանի զենեալն ուղղակի « խորհրդական եւ օրինական անբան գառն », որ պարզապէս կը նշանակէ հրէական զատկին զոհը (աստ, 377): Եւ Տաթեւացին անոր արձագանգ կու տայ՝ թէ « ճիւղ գատիկն » է այն, եւ անկից ճշակողը կը հաղորդուի « ճնոյն եւ օրինակիկն » (Քրզ. ձմր. 605-6). եւ թէ գառին զենումս « ստուեր եւ օրինակ է ճշմարիտ